

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

# ԱՐՁԱՅԻՆ

ՊԵՏՐՈՍ

Լ. Գ. Գ. Գ.

Տարեկան գր. ուղ. 30

ԱՐՏԱՍԱԼՄԱՆ

Տարեկան գր. ուղ. 10

Բաժանարար ՅԱԿԵԼԻՍՏ ԹԵՐԱՍԻՍ փոխարեն վճարում է գեղեցիկ պիտի ըլլան .

Թե՛ ԱՐՇԱԼՈՍՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց նախարար պետի Գիւնեց Խնդրագրութեան հասցեով թերթիս Մասնատարին, որ է՝

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրոջիր :

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ր Ե Ր Ր

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

ԳԵՂԵՍԻ ՓԱՅՈՋԱՆԱՆ

ԱՐՏՈՆԵԱԼ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԵՆԸ

ՀԱՏԵ 20 ՓԱՄՍ ՈՂԸ



## ՀԱՆԳ. Տ. ԵԶՆԻԿ ՄԱԼՈՒՆԻ

Իր պատրաստութեան զոնք . յանկարծաւան ի Լոմֆուր եգիպտոսի . Հայու թեան ընծայած է ապերախտ զաւակ մը . Փիլիպոս Պալուսին :

## ԱՊԱԿԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Շար . նախորդ թիւէն)

«... Կիլիկիոյ կաթողիկոսին կողմէն շարքի սպառնալիքներուն գոյութիւնը ցուցնող և անմիջական օգնութեան պէտքը զգացնող հեռագիրները կը տրուին Պօլիս և գաւառին կեդրոնը . Այդ սարսափի ճգնաժամներուն մէջ է որ Ատանա կը հասնի կուսակալ ձեզիս պէյ որ... վատութիւնը կուսենայ հեռագրով մերժելու Կիլիկիոյ վեհ . Կաթողիկոսին կողմէն ցոյց տրուած խուժանական հոգեկան վիճակը, և երկրի հայերուն տագնապալից կացութիւնը, հակառակ որ ինքն ալ զինուոր ուղած էր Շամէն : Այսինքն թէ՛ նորընտիր կուսակալը հաղիւ հասած, իր ներքին տրամադրութիւնները ցոյց կուտայ առ որս աչս ունին տեսնելու : Եւ երբ ձեզիս պէյ երկրին և մասնաւորապէս Հայերուն և տագնապալից

կացութիւնը՝ ուրանալով հանդերձ զինուորական օգնութիւն կուզէ, քիչ շատ դիտող և խորհող մը գծաւարալոյժ առեղծուածի մ'առջև չ'գտնեմք ինքզինքը : Իսկ Առաջնորդը... վերջապէս պայրամին հինգերորդ օրը Հինգշաբթի երկուուն կը հասնի Ատանա «երեք ու կէս ամսու երկար բացակայութենէ մը յետոյ» ինչ որ կը նշանակէ՝ Պահլի բաշային հեռացումէն երեք ամիս և Հայերու հանգեպ շարքի մը սպառնալիքին ծրնունդ առնելէն երկու ամիս ետքը... Տեղն է ըսել՝ յարագոյն է ու՛րջ քան երբէք : «Եւ հասած երեկոյիս իսկ կարտէն, Պաղչէէն, Հաճառլէն, Շէխ Մուրաթէն եկած փայտիկներ և նամակներ կը գտնէի Առաջնորդարան, որոնք շարքի սպառնալիքէն ազատելու համար մեր օժանդակութեան կը դիմէին» : Եւ Գեր . Առաջնորդին կողմէն եղած դիմումին վրայ «կուսակալը անմիջապէս կարող հրամաններ կուտայ և առժամաբար շարքի ծրագրերը կը մնայ իր սաղմնային վիճակին մէջ : Եւ թէպէտ Մուշեղ Սրբազան իր այս

յաջողութիւնը համեստօրէն «քուզել կուզէ ըսելով թէ՛ «որովհետեւ մինչև այդ պահը Պօլիսէն հրաման տրուած էր ու և իցէ շիտթութեան տեղի առողջները հրացանի բռնել» բայց գրքովին շարունակութենէն կատարելապէս կը հասկցուի որ կուսակալ ձեզիս պէյ իր իշխանութեան համալոր եթէ ո՛չ իշխանութեան մը գոնէ ակնածանքի մը առջև գտած է ինքզինք, ամեն անգամ որ ուղղակի Ատանայի Առաջնորդին հետ գործ ունեցած է : Այսու հանգեք, Սրբազանին հայրական անձնութեանը հանդարտ չ'է իր զուակներուն ապագային մասին, վասնզի «Ատանա վերադարձիս երբ այդ կատարածի սպառնալիքները ահաւոր համեմատութիւններ առած էին, ամենէն ցաւալի և ամենէն աւելի տագնապեցուցիչ պարագան, որ աչքիս զարկաւ, սա էր թէ՛ սահմանադրական, ազատ ու իբր թէ արդար ըէժիտի մը օրով Ատանայի նման կարեւոր նահանգի մը կուսակալութեան պաշտօնը յանձնուած էր Երջարգի պաշտիս Ենքրիկներույ եւ հայաջիւնց ու երկրակործան քաղաքականութիւնով իսկորուած ձեզիս Պէթի մը . նահանգին զինուորական հրամանատարութիւնը յանձնուած էր երէկի Երջարգի դժոխային ծրագիրներուն գործիս ( ) և Մարտի 95-96ի շարքը կազմակերպող Ֆէրիք Մուսթաֆա Ռէմզի բաշայի, որ կարծես Ատանա կը զրկուէր Ձեզիսի մէջ իր կրած պարտութեան վրէժը լուծելու, և Ատանային Ձօրաց հրամանատարութիւնը յանձնուած էր Ահմէտ պէյ անունով իր պաշտօնին գիտակցութիւնը չունեցող անուս, միլեւանդ և բըննապետութեան բոլոր գարշաթիւներով ապականուած մէկու մը : Ահա այն երեք գիշատիչ գազանները՝ որոնք արդէն փարախի մէջ մտած՝ իրենց ա՛մբողջ վնասակար պիտի հրաւիրէին անխնայ յօշոտելու համար ժողովուրդներուն օգտակարագոյնը : Այս տեսակ վերահաս ազատքի մը գիտակցութիւնն ունեցող ազգապետ մը ինչ պարտի ընել, մասնաւոր երբ կատարելապէս գիտէ նաև որ իր ներկայութիւնը գէշ ազէկ թու՛մը մը պիտի կազմէ հրոսախուճարուն առջև... : Նահանգին առաջնակարգ թուրք պաշտօնակալներուն հոգեբանու-

թիւնը և խուժանին տրամագրութիւնը ընթերցողին առջև ըստ կարելոյն պարզուած ըլլալով, այլևս աւելորդ կը համարիմ յիշատակել թէ՛ կուսակալին յատկանշական արարքները և թէ՛ հոյակաւ խրմբակներուն նշանակալից բայց տակաւին ցանցիւ խոշտանգումները : Ձուգահեռաբար Գեր . Մուշեղ Սրբազանին գրքովին մէջ մասամբ արտատպուած 908 Հոկտ . 25 թը ուակիր կոնդակին մէջ բացատրութիւն պիտի փնտրեմ 14)27 Յուլիս «Իրիզանդիոն» ի խորագրականին հետեւեալ պարբերութեան : «(Ամերիկեան Միսիօնէր) Տօքթ. Գրիգորի համաձիտ չ'է Մուշեղ Ե. պիտկապոսի ինչ ինչ ազատ բանախօսութեանց» : Թողլով այս ամեն մանրամասնութիւնները, և ընթերցողը յանկարծակիի չըրերելու նպատակաւ միայն մէջ պիտի բերեմ փոխանցական հետեւեալ երկու հատուածները : «Այս միջոցին ( ) կառավարութեան և թուրք մեծամեծներու գրգռութիւնը խուլ կերպով կը մեծնայ, երբ կը տեսնեն Ատանայի կուսակալութեան հայերուն միանրագ պաշտօնական դիմումը, որով կը մերժեն զինուորական տուրք վճարել 1325 ելևմտական տարուայ համար, և իրենց զինուորագրութեան յանձնառութիւնը կը յայտնեն» : «Սոյն գէպքերէն մինչև Մարտ 2 տիրող հանդարտութիւնը հաշիւ խանդարուեցաւ Սեցի երեք ջորպաններու վերաւորումովը Ապտալներու կողմէն» : Եւ հիմայ ուշագրութիւն : «ՍՈՅՆ ԱՊԱԿԱՅ ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ» կը թապէս օգտուելու նպատակաւ Փետր . 16ին Ատանայի Գաւառ . Ժողովոյ կողմէն տրուած որոշման համաձայն Մարտ 4ին Ատանայէն կը մեկնիմ գէպի եգիպտոս, Ատանայի մէջ բացուելիք Կիլիկիոստեան վարժարանին հասոյթին մէկ մասը ապահովելու համար եգիպտոսի Հ . Բ . Ը . Միութեան և Հայ հարուստներու քով դիմումներ ընելու . իմ այդ միամտեայ բացակայութեանս միջոցին է որ Ատանայի գէպքերը դահապէժ ընթացք մը կառնուն : Արդարև, Սրբազանի մեկնու-

( ) Մ . Յ . - 1909 Փետրվարի վերջերը : ( ) Մ . Յ . - Ընդգծումները հեղինակէն են :

մէն քսան և ութ օր ետքը Չասկին երբորդ օրը կսկսի Կիլիկիան այն արհաւիրքը ու 30,000 հայեր կ'ոչընչացնէ և նոյնքան ալ սրբեր կը ձգէ արդէն բազմախոյ Ազգին գերկը . . . :

Թէպէտ Մուշեղ Սրբազան տա. կաւին 25 էջերու մէջ շատ մը բա. ներ կ'ըսէ ապացոյցանելու համար թէ Ատանայի կոտորածը կանխա. պատրաստուած էր, մենք մեր աշ. խառութիւնը աւարտած կը համա. ընք, Սրբազանին երբէք տարա. կարծիք գտնուած չ'ըլլալով նախ. ճիրը յղացող և գործադրող ապե. ըստներու մասին :

Սակայն այն գրութիւնը չ'վեր. ջակէտած, հետեւեալ մի քանի դե. տողութիւններն ալ կը ներկայացը. նենք ընթերցողներուն .

Ինչպէս տեսանք Մուշեղ Սրբա. կազոս իր Եղիպատոս երթալուն ինչուն և ինչպէսը բացատրելէն (?) ետքը կ'ը. սէ . « Ի՞մ այդ միամտեայ բացակա. յութեանս միջոցին է որ Ատանայի գե. պրքերը գահալէժ ընթացք մը կ'առնուն » :

(Շարունակելի) ԱՄԵՆՈՒՔ

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

ԱՌ ՍԻՐՆԵԼԻ ՀՍՅ ԱՉՂԻՆ

(Շարն. նախորդ թիւէն և վերջ)

Կերթնական վարչութեան հիմա. կան պարտաւորութիւնն էր իսկոյն այս խժոճութեանց պարբեր կրեւան հանել և իրարմո միացած ու երեսուցէմատան մէջ որվացած զուր և իրարգործութեան այդ փշալից թափառաչրկի արանհաները մաքրել և իրենց անմիջական պատ. կերբը ինկած վանքը, հաստատել և ա. պանովել : Բայց ընդհակառակը, Ազգ. վարչութեան պաշտօնակները վատորի գաղափարներէ թելադրուած՝ լուս թիւն պահեցին և ցաւալի խժոճանօք պար. սաւանօք և անարգանօք գիտակից միա. քերու մէջ՝ ընդդէմ երեսուցէմի Պատ. ըրարքին և միաբանութեան վեասա. կար որմնիք ցանեցին . ու մէկ կողմէ առիթ տուին որ փախստականները ա. լեցնեն երեսուցէմի պատրիարքական իշխանութեան և իրաւասութեան հան. ղէպ ցոյց տաւած անպատկառութիւնը և նորարար անարարժ և սոսեթի ղէպ. քերու թելադրութիւնը՝ մտանաւորապէս ի Յուպէ - Գարեգին վարդապետ գա. շունահա՛ր եղած, Եսայի վարդապետ մի քանի աւուր անիմանալի հիւանդու. թիւմք, երկուքն ալ կը մենսին . վեր. ճիւղը դեռ նոր ա՛յս տաւաւա :

Երկինք ու երկիր արեւնարբու ոճրագործին և մեղակիցներուն ղէմ վրէժ կը դռնն . վրէժ կը խնդրեն զայրագին :

Ահա պարզապէս պժգալի տաւալ մը, որ անձնական կիրք ու ստեղծութիւն գոհագնեղ և երեսփոխանաց՝ ակներև փախստականներուն թմբուկը զարնելէ զատ . ուրիշ ո՛ր և է յատկութիւն չու. նի : Ասիկա բռն չէ՞ թէ անարհիւայի ելած են մեր ազգային պատկանելի՞ ք՞ Երեսփոխանութեան անդամները :

Այս և տար նման բոլոր իրակա. նութիւններէն՝ որոնք տեղի կուենան մայրաքաղաքին մէջ, բացայտու կը տեսնուի թէ՛ ազգային շրջանակի մէջ նախորդ բնապետական Ռէժիմիւն տար. քեր բնապետութիւն մը կը տիրէ, որ բան գործ բրած է հալածել ճշմարտու. թիւնը երեսուցէմը, անոր պատրի. արքութիւնը՝ Միաբանութիւնը, ա. տանձնաշնորհումները . ապապելով ա. մէն կարգ ու սարք և ձուլելով Պոլսոյ լաբրիֆրիթոսային Պատրիարքարանին մէջ . այն պատրիարքարանին՝ որ նոյն իսկ իր գործերը չի կրնար վարել, և որուն ի՛նչ անսակ պատրիարքարան

ըլլալը անկէ յայտնի է որ՝ Շարիկեա. նի պէս արտաբուսա հայ ձեւագող, իսկ ի ներքուստ օտարազգի և հայութեան թշնամի ու անոր գերեզմանը փորող, գերազանցապէս ժանգոտած զապանակ մը ունի՝ մքրտած աստիճանի կուսակ. ցաւոյ . . . ապա թէ ոչ՝ բացայտու կերպով ապացուցուած է որ՝ Ս. Յա. կորայ վանքին արդի ողբալի վիճակին ճշմարիտ պատճառները, հրէշային գեր իտազացող այդ անաժօթ փախստական. ներն են, որոնք պէտք էին զատապար. սուելի ընկալանարար՝ և անպատիժ կը մնան դեռ : Հին բէժիթի նախանձը շար. մող բունպետութիւն մը չէ՞ ասիկա :

Ո՞ր օրէնքով Յարութիւն պատրի. արքէն և Միաբանութիւնն ընտրուած սեղապահը՝ Կեր . Տ . Երեցեան կրու. սնդէժ չի զրկուի և անոր տեղ ան. փորձ մէկը զրկել կուզուի, անտարա. կոյս զինք զրկող կուսակցութեան պո. ռուն շարելու համար . . . չէ՞ :

Բայց երեսուցէմին հաւատափոխ ըլլալու օչ արամադութիւն ունի և ոչ ալ իր կրօնքէն ու ծէսերէն դժգո. հութիւն մը . . . :

Միայն թէ Կ . Պոլսոյ մտմուլը քիչ բացառութեամբ՝ անհիմն և մտացածին ենթադրութիւններով և յանիբարե յարձակումներով թէ և արամաբանքի է արժանի, բայց ցաւօք սրտի կզգաց. ու թէ՛ այդ արձամարհուած մամուլն է որ համբաւներ կը շինէ և համբաւներ կը խորտակէ, և ժողովուրդն ալ՝ լուրջ գիտակցութեանէ դուրս լինելով, այն. պէս կը մտածէ՝ ինչպէս մամուլը կը թե. լադրէ :

Իրերու այս ընթացքէն դատելով, ի հարկէ անարգ Աւետիս ծառայի խմբ. ակին համար ի Պօլիս - ՉՐԻ - օչինչ կը շինեն, որպէս զի մամուլը համբաւ շինէր իրենց համար : Պէտք է շատ ստակով անպատճառ կաշառած ըլլան իրենց օսկան լրագրիներն . և բուն իսկ այս պատճառաւ է որ իրենց յատուկ գաւը, մտանութիւնը, թալանը, յա. վշտակութիւնը, խռովարարութիւնը, կուսակցութիւնը, ոճրագործութիւնը՝ խարբարութիւնը, կիզմաւորութիւնը, անպատկառութիւնը և ինչ և ինչ միջոց ք. զարկուած կը մնան ի մեծ ամօթ և ի նախատինս՝ ազգային վարչութեան « բարթիզան » անդամներուն . . . :

Սակայն պէտք է գիտնալ որ՝ ինչեալ կաշառը Գլխադիրքի « մալն » է, և այն ալ խորուած՝ զնդուումով ու զօշոքա. ղութեամբ . գուցէ շատ սուղի նստի իրենց և ոճիւններու մեացորդ մը իսկ չ'գտնեն վաղ կամ անագան . . . :

Վերջ ամենայնի՝ միսթարական , քաջալերական և յուսարգական աւետ. անց ասալ մը կը ծագի Պոլսոյ Պատրի. արքարանի հորեզոնին վրայ . Բարձրա. շնորհ Տ . Տ . Եղիշէ Սրբազան Արքե. պիսկոպոսը, որ սզգաւթութեան ճըշ. մարիա պարտականութեանց զանցառող մը և իրեն պաշտօնին մէջ թերացող մէկը չ'է բնաւ . այլ ընդհակառակն ի. րեն պարտականութիւնը անձնութեա. րար և պէտք եղած կերպով կատարող մը . և անշուշտ պիտի յամտան մնալ իր անարատ կարծիքներուն մէջ և չը պիտի համաձայնուի բնաւ՝ նիւթական կամ բարոյական կաշառի գնով մամու. լըն իրեն թիկունք ունենալ, ցոյց տա. լով իր հուսաւարիտ ուղղութիւնը երու. ստղիմի Առաջնակիս Պատրիարքարանէ մուրախմ անանկաշխարհական անդրեպ. ըստ որում, մեծ նշանակութիւն ունի նԱ մեր ազգ . ներքին կազմակերպու. թեան անիւք դարձնելու անսակեանով . և այդ վերջին հանգամանքին վրայ իրաւունք ունինք ծանրանալու և ըս. պանջու իրմէ մե՛ծ բարեքներ, իսկ ընդհակառակն, եթէ ազգ . ժողովները պիտի յամտան դեռ ծառայել լով անձ. նական վրէժիմարութիւններ յազցու. նելու . այն սահն երեսուցէմի մէջ, թո՛ղ Ս . Յակոբեանց հնադարեան վան. քը, ինքն իր գլխուն ճարը նայի :

« Որ ունիցի մամա՛ն լուրջ լը. սիցէ » . . . Ա՛լ ամօթ է՛ . ամօթ , խեղճ տղգի մը քթին այսքան խն. դալ . . . . .

ՐԱԹԻՊ

ԴԵՊԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Եւ ըսին որ՝ « Պատրիարքական ատենը Հաճընի խզճալի կացու. թիւնը ներկայացնող յոգուած մը հրատարակուած տեսնելով «մանկու. մէի» մէջ, անոր վերջնական դա. զարուամը վճռեց, արտօնութիւնն ալ շնչելով » :

Ու ալ լսան մը խոսող չեղաւ այդ մասին . . . :

Եթէ ստուգիւ «մանկումէ» Հա. ճընի վիճակովը զբաղած ըլլալուն համար իր արտօնութիւնը շնչուելու չափ մեղանկյած եղաւ, ուրեմն ազ. գին մէկ զրճն էր . իր պարտակա. նութեան գիտակցութիւնը ցոյց տուած էր : Հետեւաբար պէտք էր որ ազգ և ազգային իշխանութիւնը ամեն կողմերէ ոտքի ելլէին, ի. րար անցնէին, և Մամուլի ազա. տութիւնը բունբարութիւնէ, ու ազգին տառապանքները ու վէրքերը մատ. նանշող ուժ մը մահացու կերպով նետահար ըլլայ զերծ պահէին :

Բայց այնպէս չեղաւ : Սալունի. կի կալանաւորին յաջորդող նոյնչափ վայրագ բռնաւորներ, փրաւունք զօ. բաւորինն է՛ի բանաձեւին կրթնած, ազգին ու անոր գիտակից անհատ. ներուն ճչելու պատրաստուած կո. կարգը սեղմեցին և բողբոք ձայնե. րը անիլ տուին բրտութեան ճի. րաններուն ներքե . . . :

Սակայն ի՛նչ կարելի է ըսել սա մեր ազգին մէջ աղիւ համար. ձակութեամբ օժտուած կարգ մը յուրժոռաներուն, որոնք հանդարտ մնալուն ինչ ըլլալը չեն գիտեր, ու վայրկեան մը իսկ հանգիստ չեն ձը. գեր զմեզ, «մանկումէի» արտօնու. թեան շնչուելուն գալանեաց վա. րագոյրին մէկ ծայրը վեր առնելու վտուկատութիւն մը ցոյց տալով, և աւարտած կը նկատեն իրենց պարտականութիւնը, մեր տրամադ. րութեան տակ դնելով «մանկումէի» այն թիւը, որ առիթ ընծալած է՝ իրենց արհեստին բերմամբ բնական հակառակորդներու անորժակը գէպի մասնաբաժնի սրուելը ապացուցանող :

Մենք «մանկումէի» Աւագ Խըմբ. քաղիք Տիար Երուանդ Տէր Անդ. րէասեանի խնդրոյ առարկայ գրու. թիւնը հրապարակ դնելով, կը թե. լաղրենք մեր ընթերցողներուն ու ըսակել այն արարքը՝ որ « Հաճընի թղթակցութեան մը » հրատարա. կութեանը վերագրուեցաւ : Յիշեալ գրութիւնը շատ մը թափանցիկ ճըշ. մարտութիւններ կը պարունակէ, որ ահաւասիկ :

ԻՄԲ .

Պ . ՅԱՐԱԹԻՒՆ ՇԱՅՐԻԿԵԱՆԻ ԳԼՄԲԸ Պ . ՇԱՅՐԻԿԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԱՄԱՍՍԱՆԷ

Ազգ . երեսփոխան, Բաղաքական ժողովին անդամ, բայց երկու ժողով. ներուն ալ անիմաստ համակերպութեան շնորհիւ անոնց վրայ ախրող Յարու. թիւն Շահրիկեան խիստ շատ կուզայ կոր :

Ազգին մէջ մտրդ չէ մնացի . ա. մենքն ալ մտաւոր ու բարոյական սը. նանկութեան մտանուր են, և փա՛ռք Աստուծոյ, Շահրիկեանը եկեր է Ազգին գործերը վարելու . . . Պագու ի նա. թարերուն շափ իր խորունկ և ա. նիմանալի սկզբունքներով :

Այս « սկզբունքի մտրդ » որով ինք և ուրիշներ կ'որակեն զինքը, հրապարակաւ Պատրիարքին ղէմ յար. ձակեղէ և անոր մասին Ազգին վստա.

հութիւնը աղարակել ջանալէ վերջ, ազգ պարտը սակայն կը շարունակէ իր գործակցութիւնը անոր հետ, և յար. ձակութ ըրած օրն իսկ անոր կ'ընկե. րանայ պաշտօնական ցարաբերութեանց առթիւ :

Բայց քանի մը ճշմարտութիւններ ըսելէ առաջ, նախ գիտնանք թէ Յա. րութիւն Շահրիկեան ի՛նչ ամբաստա. նութիւն կ'ընէ Դուբեան Պատրիարքին ղէմ : Ասոր համար նախ պէտք է վեր. լուծել իր լեզուն, ինչպէս Մանգուլիէի ընթերցողները վարժուած են արթէն վերլուծելու «Արտոմի» լեզուն, և այդ վերլուծումէն վերջ կը տեսնենք թէ Շահրիկեան իբրև «թոյլ» կ'ամբաս. անէ Պատրիարքը : Առանց ու ե է փաստի սակայն : Տրամաբանող Շահ. րիկեան այն աստիճան կուրացած է Պատրիարքին ղէմ սնուցած ասելու թեան ինչ գարձուածքներուն մէջ իրեն բա. ցարձակապէս համարաւ չգտնելով Պատ. րիարքը, հարկ դատեր է յարձակել ա. նոր վրայ . եթէ ոչ՝ « թոյլ » « մոյլ » ի խնդիր չկայ :

Ինչո՞ւ Պատրիարքը թոյլ ամբաս. անուի : Թոյլ ինչո՞ւ համար : Անոր համար որ Շահրիկեան քաղաքական ժողովին մէջ անարարք և անբնական. քով խօսելու անվարժ անդամներու ներկայութեան խրախուսուած՝ ինք մի՛նակը կը անօրինէ ամեն բան, ինք կը խօսի, ինք կ'որոշէ, և յետոյ Պատրիարքն ալ կը գործադրէ, բայց ոչ, գործադրողն ալ Պատրիարքը չէ, որովհետեւ . . . Շահրիկեան չի ձգեր, գործակատարի հանգամանքով Պատրի. արքին փեշէն չի բաժնուի, ինք կ'եր. թայ անոր հետ ամեն տեղ : Ուրեմն ո՞ւր է հոս Պատրիարքին թուլութիւնը : Այո՛, Պատրիարքը թոյլ է, բայց ա. սիկայ Շահրիկեան ըսելու չէր . որով. հետև Պատրիարքին քոյրսուրբեանքն է որ Շահրիկեան կը տիրէ կը տիրապե. տէ . այդ համեստ եկեղեցականին ի. րաւաստն ոգին շնորհիւ է որ Շահրիկ. ևան քիթը ամեն բանի մէջ կը խոթէ : Մե՛նք պէտք է « թոյլ » ըսենք Պատրի. րիարքին, որ . պարզապէս, խիստ շատ երես կուտայ Շահրիկեանին, ինչ. պէս իզմիրլեան Պատրիարք երես կու. տար և Արշարակուն Ծովճաննէն Ե. պիսկոպոս երես շատուն համար ինչաւ :

Բայց Պատրիարքին հանգէպ Շահ. րիկեանի բռնած անուղիղ ընթացքին բուն շարժախիթը գիտէ՞ք ո՞ւր է . ո՞ւր կէջ կսկսի թաքուն ստեղծութիւնը : Ձէ՞ք գիտեր արդեօք, կամ չէ՞ք կոա. հած . . . Սոյ գասելութիւնը կսկսի այն նշանաւոր ճաշէն, որուն չուղեց եր. թալ շայնց Պատրիարքը իբրև սգա. կիր, և ուր գնաց Շահրիկեան բողո. րովին տարբեր հանգամանքով : Բայց ուշադրութիւն ըրէք որ Շահրիկեանի համար այդ հանգամանքն է ամենայն ինչ, և երբ պախարակուեցաւ, և ուսելու իր անարգութեանը երբ չկրցաւ Հայոց Պատրիարքին ներկայու. թեան վարակուի, ին տակ պարտեղիկ, կրակ կարեցաւ, և իբրև Երեսփոխան և իբրև Կաղաք . ժողովի անդամ ի. րեն . . . անշուքէն թոյլատրուած միա. ճեմ անութեամբ սկսաւ նեղանալ, արը. տըտալ, և հրապարակաւ վարկաբեկ ընել Հայոց Պատրիարքը :

Այս է անա Շահրիկեանի ոգին, զոր ինք «առաջիմական» կանուանէ, իսկ մենք կ'անուանենք զայն . . . քայ. քայիչ :

Պատրիարքը զգուշաբարութիւն չու. նի, կ'ըսէ Պարոն Շահրիկեան : Կը տեսնէ՞ք, ճաշին կ'ակնարկէ, հրաւե. րին Պատրիարքին չպատասխանելուն ատթիւ իր զայրոյթը կը պատմէ մեզի Շահրիկեան միամտօրէն :

Դուբեան Պատրիարքէն աւելի ըզ. գուշաւոր եկեղեցական ունի՞րք մենք, նոյն իսկ ծայրայեղօրէն զգուշաւոր, զոր մինչև իսկ կրնանք թոյլ որակել, մեր վերջ բացատրած եղանակով : Ե. թէ Շահրիկեանի գլխուն վրայ գնէինք Դուբեանէն նուազ զգուշաւոր մտրդ մը. Շահրիկեան հիմայ թաւապար եղած էր արդէն : Աստի Շահրիկեանի կը մնար կրթալ խոտարաբար համբուրել Դուբ.

եան Պատրիարքին աջը անոր... ըզգուշաւորութեան համար... Սրբազան Սրբապետին, իր Տեղապահութեան վերջին օրերուն նուազ զգուշաւոր եղաւ, եւ քանիցս սաստեց Շահիկեանը, որ իր վրէժը լուծեց անկէջ, պատրիարքաւ կան ընտրելեաց ցանկին մէջ անուն մը իսկ չլինարով անոր, շնորհիւ այն անասնման ազդեցութեան, որուն ենթարկուած են Գաղաքական եւ Ռազմական ժողովի անդամները, ո՛վ գիտէ ի՞նչ վերապահուածով:

ԵՐ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ  
(Մանդուկէ թիւ 2454)  
(Մնացեալը յաջորդով)

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

Հայրենիքի ազատութիւնը ապահովելու, անոր հողային ու քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը անձերու մէջ գոյացած թիւրիմացութիւնները փարատելու եւ օսմանեան տարբերութիւնները լաւագոյն յարաբերութիւններ հաստատելու նպատակով՝ «Իթիքիւտ-Թէրազ» կուսակցութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը կատարելապէս համաձայնութեան եկան հետեւեալ հիմնական կէտերու մասին:

1. Սահմանադրութիւնը կիրարկելու եւ հանրային զարգացումը երկրին մէջ անսասնօրէն ամրապնդելու համար պիտի աշխատին եւ պայքարին միացած ուժերով, չի խնայելով. ոչ մէկ զոհարելութեան:
2. Բնաքոնքի քաղաքացիական շարժումներու հաւանականութեան հանդէպ, օրէնքի թոյլատրած սահմաններէն դուրս գործեն միասիրտ հաստատակամութեամբ եւ որոշակի ուղղութեամբ:
3. Օսմանեան նուիրական հայրենիքը անջատուէն եւ բաժանուէն զերծ պահելու՝ երկու կողմակերպութեանց միացած զործունէութեան նըպատակակէտը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապէս ցրել հանրային կարծիքին մէջ բռնակալ ընթացքի ժառանգ մնացած այն սուտ զրոյցները՝ թէ՛ Հայերը անկախութեան կը ձգտին:
4. Երկու կուսակցութիւններն ալ կը յայտարարեն թէ՛ համաձայն են «Նահանգային Իրաւանց Ընդարձակման» մասին որ կ'երաշխայրէ Օսմանեան ընդհանուր Հայրենիքի զարգացումն ու յառաջդիմութիւնը:
5. Իթիքիւտ-Թէրազը եւ Դաշնակցութիւնը, իրեն իրատեսական նախազգուշացում ընդունելով Մարտ 31ի զէպը եւ Ստամբուլի ցաւալի ազտը, օրոշեց աշխատիլ ձեռք ձեռքի սուած վերոյիշեալ հիմնական կէտերու իրագործման համար:

Իրրինաս-Թերազըի կուսակցութեան  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՂՐՈՆ  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
Կ. ՊՈԼՍԻ ՊՍՏԱՍԽԱՆՍՈՒ ՄԱՐՄԻՆԵՆ

(\*) «Արեւելք» էն կարտագրինք սոյն չըբարեկանը, Օսմ. Երեսի, ժողովին մէջ ընկերակցութեանց եւ քաղաք. կուսակցութեանց ջնջումը քուէարկուելէն յետոյ հրատարակուած ըլլալուն համար, իբր նմոյշ մը:

**Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ**

Ս. ՊՍՏՐԻԱՐԿԸ  
Կ. Պօլսոյ Կեդր. Ազգ. Վարչութեան Երեսի. Ժողովին մէջ ծանոթ ցնդի ընդի կռիւցները սկսած են:

Տարւան մը մէջ կատարած ամուլ եւ ոչնչութիւն բուրոզ նիստերուն վրայ հատ մ'ալ աւելցնելու համար, ամառոյ 2ին թէ երեքին - օրը նշանակութիւն չունի - գումարուած են՝ անցեալ շաբաթուաթիւններուն պակաս մնացած մասերը ամբողջ ցընելու համար...:

Եւ իրաւի՝ սա Շահիկեան եւ Թէքէեան անտանելիները իրենց ոչնչաբանութիւններով ազդին զԲրթէ բոլոր անհատներուն ալ հաւատարապէս նողկանքն ու զըւանքը իրենց վրայ կը քաշին:

Եւ Պատրիարք Սրբազանը՝ այլ ևս համբերութիւնը հատած, ժողովին մէջ «ստքի վրայ կելլէ» և կը յայտարարէ թէ՛ «ազգը իրենցմէ գործ կուզէ, գործ...» եթէ այդ խօսքերը ըսողը Պատրիարք Սրբազանէն տարբեր մէկը ըլլար, անտարակոյս պիտի փճէր այդ գրվա երեսփոխաններուն անտանելիութեանը չափ մը դնելու համար, ու պիտի ըսէր իրենց, «պարոն երեսփոխաններ, եթէ իւրաքանչիւրդ իրեն ապրանքը ռեզրաւ ընելու համար հոս եկած է. ատոր ազգը թոյլտուութիւն չի կրնար ընել. հոս պազար չէ. այլ արդարութեան և անկողնակալութեան սրբալային է» եթէ դուք սակայն՝ անպատճառ ռեզրաւով պիտի զբաղիք, լաւագոյն պիտի ըլլայ ձեզ համար Բերայի կամ Ղալաթիոյ... տուներէն մէկուն դուռը կանգնել և գուլիլ ձեր արամադրելի ապրանքները...:

Չնք հետաքրքրուել թէ՛ Շահրիկեան ո՛ւր տեղի և երկրի երեսփոխանն է. սակայն իր մինչև ցարդ ունեցած ընթացքէն, շարժ ու ձեւերէն, կողմակցական վերաբերումներէն կարելի է հետեւցնել թէ՛ թէ՛ պայառի տեղէ մը դուրս ցատկած է... իբրև երեսփոխան:

Բայց ի՞նչ ըսենք սա Թէքէեանին, որ ըսածն ու ըրածը չի գիտեր, ու մինչև Սրբազան Պատրիարքը զայրացնելու կելլէ իր արեւ ձեռք թափփփուքներովը:

Եզրիպտոսը կերելի թէ՛ մարդու պակասութեան անճրկած, ատոր կարօտ մնաց որ Պօլսոյ վարչութեան մէջ իրեն սեփականեցուցուած արդարութեան ախոռը աղտոտէ ու բնթեցնէ...:

Եզրիպտոսի երեսփոխանութեան համար բաւական մեծ արատ մը կարելի է արձանագրել իր այս անբաւական ընտրութեանը համար:  
Տեսէ՛ք ինչպիսի տրամաբանու-

**Վիճակագրական**

Ի ՆՊՍՏ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՂԲԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՍՐՏՈՆԵԱԼ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ  
Ներքին Գործոց Նախարարութեան 23 Օգոստ. 1909 թիւ 89 հրամանագրով:

ԹԻԻ ՏՈՄԵՐՈՒ 30.000՝ ՈՐՈՆՑ 300 ԹԻԻԵՐԸ ՊԻՏԻ ՇԱՀԻՆ  
ԱՄԷՆ ՄԷԿ ՏՈՄՍԻ ԴԻՆԷ 10 ՄՈՒԼԷՄ ԿԱՄ 2 ՂՐԵ. ԹԱՐԻՑԱ  
Պ. ՊԱՐԳԵՐԸ ԶԲԱՆՍԱԿԱՆ 100 ՈՍԿԻ Ե

Տեղի պիտի ունենայ առաջիկայ Կիրակի 26 Սեպտեմբեր 1909 (Յ. Մ.) ՄԵՍ ՍՐՃԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆԻ ԱՌՁԵՒ

Վիճակահանութեան Ընդհ. ներկայացուցչին է Տ. ՍԱՐԳԻՍ ՄԻԻՏԻՐԵԱՆ՝ որուն պէտք է դիմել, Էօլպէքէյէ Վակի - Ել - Պրիէ փողոց թիւ 68,

Շանդր քիւրու վճարմանց կեդրոնակէտին է Էօլպէքէյէ Մ. ՊԱՂԴՅԱՆ ՊՈՆՔՈՆ  
Եւ այն լիութաները որ ՊԱՂԴՅԱՆԻ ՅԻՐՄՈՆ չեն կրեր անվաւեր են:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԱԿ ԳՆՈՂՆԵՐԸ ԿՐԱՆ ՏՈՄՍԱԿԱՆ ԿՈՍԵԼ  
Վիճակահանութեան քաջուած օրէն մինչև երկու ամիս ներկայացուած շահող տոմսերուն պարգևները անմիջապէս պիտի վճարուին:

Վստահօրէն կրնանք յայտարարել թէ՛ ամբողջ Եզրիպտոսի մէջ գտնուած 30 տե. սակ վիճակահանութիւններէն, գնողներու համար ամենէն նպատակաւորները այս տոմսերն են:

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԼ ԿՂԵԴՈՒՆՈՒԻ ՅԱՐՄԱՐԱԴՈՅՆ՝ ՁԵՂՁՈՎ:

Թեամբ կը մտածէ Եզրիպտոսի լոյսի երեսփոխանը:

Խնդիրը նոր երեսփոխանի մը ընտրութիւնը վաւերացնելու շուրջ կը դառնայ, ու մեր գրվա երեսփոխանը՝ անոր երուսապէսմապաշտպան մը ըլլալը բաւական կը համարի զայն դաւաճան մը նկատելու, անոր ընտրութիւնը բեկանելու համար:

Սամաթիոյ երեսփոխանին ընտրութիւնը վաւերացուելը կամ ոչ նշանակութիւն չունի մեզ համար: Սակայն երեսփոխանի մը կերբերէ կուրացած ըլլալով ցուցադրած տարապայման տգիտութիւնը մեր ու շահութեանն չի վրիպի:

Պ. երեսփոխանը՝ երբ Եզրիպտոս կը գտնուէր, և ոչբայեալ Արփիարի սպանման առթիւ մէկ ոտքը միշտ կառավարական պաշտօնատուններուն մէջ էր!! Իր աչքերովը տեսաւ թէ՛ կառավարութիւնը մարդասպան սճրադործին իրաւունքները պաշտպանելու համար անգամ փաստաբան մը նշանակած էր... Ուրիշ հազարաւոր օրինակներ մէջ բերելու հարկ չկայ:

Այս տեսնելէ յետոյ, ելլել նոր ընտրուած երեսփոխանի մը ընտրութիւնը բեկանելու համար այնինչին կամ այնինչին պաշտպանութիւնը ըրած ըլլալը յանցանք նկատել և դաւաճան համարիլ... վայ ապուշ վայ... Խօսելու տեղ հապայիւրպի՛նք ինքիւ:

Սակայն պէտք է գիտնաս որ՝ Եզրիպտոսի երեսփոխանութիւնը եթէ քիչ մը ծանօթութիւն ունենար

քու ներքին կեանքիդ ու խայտառակ արարքներդ, իր քուէին ծայրը անգամ չ'պիտի ցուցնէր քեզի: Բայց կերելի թէ՛ վերջապէս մօտ օրէն ամէն բան պիտի լսէ, և պիտի զըջայ իր կատարած ընտրութեանը համար, ու այն ատեն ընտրութիւնը բեկանելու կարգը քեզի պիտի դայ, Պ. երեսփոխան...:

**ԵՐՈՒՍԱԿԷՄ**


Ազգային վարչութիւնը Երուսաղէմի գործոն միաբանները Պօլսո պիտի փոխադրէ զանազան պատրուակներով, և անոնց աեղ Շահրիկեան ալալալոյցոյ պիտի երթայ Պատրիարքելու, պատարագելու և պատառաքաղելու...:

**ՀՐԱԺԱՐԱԿԱՆ**

Սրբազան պատրիարքին հրատարականը տակաւին ընդունուած չէ եւ ջանքեր կը լինին եղեր ետ առնել տալու համար, սակայն վարչապետին յայտարարութիւնը, թէ «պատրիարքը պէտք է միմիայն կրօնական գործերու միջամտէ եւ ո՛չ թէ քաղաքական», յայտնապէս կրնայ կոնտրոլել հրատարականի հարցը:

Այն պարագային, երբ կեդր. Ազգ. Վարչութեան բոլոր ճիւղերը զարբին գործիլէ եւ Պատրիարքարանը փակուի, ինչպէս որոշած եւ սպանագած է եղեր վարչութիւնը, այն ատեն զէպերը կարեւոր փոփոխութիւններու պիտի ենթարկուին... թէ՛ ո՛րչափ մեզի աննպատակ կրնայ ըլլալ այդ փոփոխութիւնները. առ այժմ որոշ բան մը ըսել կարելի չէ:

Հետագիները տե՛ս չորրորդ երեսը:



**ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ**

ՇԱՐԱ ՄՕՀԱՄՄԵՏ ԱԼԻ, ՏԱՐՊ - ԷԼ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1  
ԿԵՄԷ ԷԼ ԿՈՒՂՐՍՄ ՄՁԿԻԹԻՆ ՃԻՇՏ ԴԻՄՍԱՑ

Երկար տարիներ կարեւոր տուններու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր և թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ ֆապրիկաներու ապրանքները ընտրելով կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները:

Նորագութեանց համար երբ պէտք ըլլայ՝ յաճախորդաց տունը կայցելէ և իր կատարած նորագութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ: Կը վաճառէ նաև ամեն տեսակ կապի վառարաններ և ատանց նորագութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ և գիւրազին: Իրեն զիմուղ բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան:

